ԳԵՐԽԻՏ ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Արդեն համազգային մի տևական կյանք է մեզ ծեծելով-ծեծելով՝ հորով-պապով-թոռնով՝ մեր փարախն են քշում - համեստ մեր տեղը գտնելու, մեր ոտքը մեր վերմակի չափով մեկնելու, և շատերս արդեն՝ զորական ու քաղաքագետ, պատմաբան ու բանաստեղծ, նկարիչ ու գործիչ՝ համեստ մեր տեղերը գտել ենք, մեր արևի ձենն ենք ածում:

Համազգային մեր զորությունը, զորությունը ազգովին՝ ամեն մեկիս մեր տեղը կզորացներ յուրաքանչյուրիս ու ամենքիս. համազգային մեր տկարությունը աղարտում ու աղավաղում է յուրաքանչյուրիս ու գրեթե ամենքիս վերընթացը:

Եվ չեն աղարտվում, չեն աղավաղվում, չեն բեկվում, կիսատ չեն մնում մեզնից նրանք՝ ովքեր այս աշխարհ ոտ են դնում որդու և տիրոջ իրավունքով ու կամքով - մի Իսահակյան, մի Չարենց, մի Սարյան ու Խաչատրյան, մի Թումանյան:

Ըստ երևույթին ոգու վերին իմպերատիվը մեր վարքի ու գործի մեջ նույնքան զորեղ գործոն է, որքան մեզ չափաբերող, մեզ մեր երկրային չափերին բերող իրականությունը: Ըստ երևույթին մեզնից նրանք՝ ովքեր այս աշխարհ ոտ են դնում որդու և տիրոջ վստահությամբ - իրենց այն մյուս՝ իրենց ներսի թագավորությունում անպայման տեսած են լինում իրենց աստծու պատկերը, ընկալած են լինում նրա անհունչ շշունջը, և այդ հաղորդությունն է հաջիմահտեսու վայելուչ վստահություն տալիս նրանց մուտքին մեր աշխարհ. նրանք իրենց Մեքքայում եղել են, նրանք իրենց Մեքքայից են գալիս, նրանք պատգամաբեր են, նրանք լեցուն են իրենց աստծու շշուկներով, նրանց կառույցներում այլ կամքերի համար տեղ չկա:

Ռազմիկ Դավոյանի մուտքը վստահ էր, և ձայնը հաստատ: Այդքան վստահ մուտք, այդքան արդարացվող վստահություն, միանգամից այդպիսի հասունություն - մեր բանաստեղծությունը նախկիններում թերևս մի քանի անգամ արձանագրել էր, իսկ իմ սերունդը չարձանագրեց: Ռազմիկն այլ ոլորտներից, այլ ժամանակներից էր գալիս. ճշմարիտ բանաստեղծներն իսկապես գալիս են մի այլ ժամանակից և ապրում են իրենց այդ գերխիտ ժամանակով:

Ռազմիկ Դավոյանը վաթսուն տարեկան է:

Ռազմիկ Դավոյանի Ռեքվիեմը քառասուն տարեկան է: Քսան տարեկանում տողեր գրել, էջեր լցնել՝ որ իրենց ծնունդի իսկ

պահից խայտալով ու զրնգալով ճամփա են ընկնելու քեզ հետ, և հոգնության, հուսահատության, ու անկումներիդ ժամերին չես ամաչելու այս աշխարհում ոչինչից ու ոչ մեկից - միմիայն իրենցից՝ քո խայտուն ու զրնգուն այդ քոչուքարվանից, նշանակում է քսանամյա այդ պատանին իրոք Մեքքայից էր գալիս, իրոք երկնքից, Աստված անվանյալ մեծ Բանաստեղծից էր ընթերցում իր կուռ տողերը, իր շքեղ էջերը:

Եվ՝ Սարոյանի խոսքով՝ ճշմարիտ բանաստեղծները մեկ անգամ չեն մեռնում: Եթե մեռնում են մեկ անգամ՝ մեկընդմիշտ են մեռնում: Վաթսունամյա Դավոյանը մի երկու անգամ մեռել է: Իր հերթական, մերօրյա հարությանը նա իհարկե նույն Ռազմիկը չի լինի, որովհետև ողջ հայրենիքով, մի տեսակ՝ ամբողջ մայրցամաքով ինքներս մեզնից, և մեր այսօրվա հեռուներից երեկվա մեջ ամեն ինչ ու ամեն ոք երևում է լիովին այլ, ոչ այնքան նշանակալից տեսքով ու իմաստով - բայց և երեկվա մեր դեռ խաղաղ հանգրվանում ինքն էր՝ Ռազմիկ Դավոյանը, որ գալիքի փլվող հորիզոնների տագնապով երգ էր հյուսում իր չբռնած ձեռքերի ու չհնչյունավորված տողերի մասին:

Մեզնից ոչ մեկի - ի՛ր գուշակած հեռաստաններում ենք այսօր, այսօր ի՛ր մղձավանջներն ենք ապրում, ասել է՝ ի՛ր ժամանակներում ենք ապրում, և այս ժամանակներում նոր Դավոյանի քայլը մեզնից մի քիչ առաջ է լինելու, որպես մեզ անծանոթ, իրեն լավ ծանոթ ափերում: